ՏԵՂԵԿԱՆՔ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ և ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 110.[2]. Շրջանառությունն արգելված՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ցանելը կամ աճեցնելը

(վերնագիրը խմբ. 30.04.13 ՀՕ-36-Ն, 06.12.17 ՀՕ-242-Ն)

1. Շրջանառությունն արգելված՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ցանելը կամ աճեցնելը՝ մանր չափերով՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկից տասնապատիկի չափով:

2. Շրջանառությունն արգելված՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ցանելը կամ աճեցնելը՝ զգալի չափերով՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից երեսնապատիկի չափով:

3. Շրջանառությունն արգելված՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի ցանկը, դրանց մանր և զգալի չափերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

(110[2]-րդ հոդվածը խմբ. 23.10.87, 02.09.93 ՀՕ-79, 30.04.13 ՀՕ-36-Ն, խմբ., փոփ. 06.12.17 ՀՕ-242-Ն)

«ՀՈԴՎԱԾ 110.[3]. Գյուղատնտեսության բնագավառում գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների գործածությունը

1. Գյուղատնտեսության բնագավառում գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների հետազոտությունը, ստացումը, փորձարկումը, պահպանումը, օգտագործումը, ներկրումը, տեղափոխումը, ոչնչացումը կամ վնասազերծումը ցանկացած ձևով՝ ներառյալ դրանց հետ կապված արտահանումը և տարանցիկ փոխադրումը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթհարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հազարապատիկից մինչև երկուհազարապատիկի չափով:

«ՀՈԴՎԱԾ 110.[4]. Մեկուսացված համակարգում և գիտահետազոտական աշխատանքներում գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների գործածությունը»

1. Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների գործածության համար մեկուսացված համակարգին ներկայացվող տեխնիկական և մեթոդական պահանջները խախտելը, կամ գիտահետազոտական աշխատանքների համար գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների ներկրման, արտահանման և տարանցիկ փոխադրման կարգը խախտելը կամ մեկուսացված համակարգերում գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների գործածության և կենսաանվտանգության ապահովման կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ յոթհարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով:

2. Գիտահետազոտական աշխատանքների համար գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների գործածությունն առանց ծանուցման իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթհարյուրապատիկից մինչև

հազարապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հազարապատիկից մինչև երկուհազարապատիկի չափով:»:

Հոդված 238[1]. ~~**Բույսերի կարանտինի և երկրագործության ոլորտի պետական տեսչության մարմինները**~~ Բուսասանիտարիայի ոլորտում պետական վերահսկողություն իրականացնող մարմինը

~~Բույսերի կարանտինի և երկրագործության ոլորտի պետական տեսչության մարմինները~~ Բուսասանիտարիայի ոլորտում պետական վերահսկողություն իրականացնող մարմինը քննում են սույն օրենսգրքի 108, 109, 109[1], 109[2] ~~և 110~~ ,110, 110.[3] և 110.[4] հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

~~Բույսերի կարանտինի և երկրագործության ոլորտի պետական տեսչության մարմինների~~ Բուսասանիտարիայի ոլորտում պետական վերահսկողություն իրականացնող մարմնի անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննելու և վարչական տույժեր նշանակելու իրավունք ունեն ~~Հայաստանի Հանրապետության բույսերի կարանտինի և երկրագործության պետական գլխավոր տեսուչը, նրա տեղակալները և տարածքային պետական տեսուչները~~ Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարը, նրա տեղակալները և տարածքային մարմնի ղեկավարները:

(238 -ին հոդվածը լրաց. 08.12.04 ՀՕ-174-Ն, խմբ. 09.11.06 ՀՕ-173-Ն)

ՀՈԴՎԱԾ 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում օրենքի հրապարակումից վեց ամիս հետո: